

որ նոքա, ուրիշ ցանկանում են մասնակցել Յօբելեարի անունը լաւերժացնելու նպատակով կազմուելիք դրամադիւի կազմելուն՝ կարող են նուէրներն ուղարկել Ե. Բ. Բաբայեանցին (Պ. Բուրգ, Մօնէտնի դժօր)։ Հաւաքուելիք դրամադիւի վերջնական կարգադրութիւնը թողնուած է Յօբելեարի բարեհալեցողութեան։

«Լուսման» կաշխատէ միւս անգամ մանրամասն տեղեկութիւններ տալ ալդ մասին. իսկ առ այժմ իւր սրտագին շնորհաւորութիւններն է ուղղում լարգելի յօբելեարի բազմամեայ պետական և գրական բեղմնաւոր գործունէութեան առիթով։

Կ. ՊՕԼՍԻՑ

Կ. Պօլսից մեր թղթակիցը հաղորդում է մեզ, որ ռուսահայ հագնորական Բագուի արժ. Ներսէս քահ. Տէր Կարապետեանցը Իզմիրեան մրցանակաբաշխութեան ներկայացրած քաւրոզով իւր տարած դրամական նուէրը՝ յանուն Ամենապատիւ ս. սլատրիարքի մի գրութեամբ թողել է ի նպատակ Կ. Պօլսի Ե. Փրէնան Ազգ. Հիւանդանոցի մանկական բաժնին—ի յիշատակ իւր վաղամեռիկ որդի Յակովբիկի։

ԳԼԴՈՆԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Այս օրերս մենք առիթ ունեցանք տեսնել Թիֆլիսից 10 վերստ հեռու գտնուած Գլդան գիւղի նորաշէն Հայ եկեղեցին, որ խառուցել է նորին Մեծութեան սենեկապետ Կ. Ն. Հաւրիմեանը։

Հաւրիմեանները կայուածատէր են յիշեալ գիւղի ու շրջակայքի և պ. Հաւրիմեանի Հայրը, որ այժմ ընտանիքով տեղափոխուած է Գլդան, կառուցել է հնում՝ տեղական վրացիների համար եկեղեցի, իսկ որդին չուղենալով հոգեւորապէս անմխիթար թողնել՝ գիւղի մի բուռն Հայ ժողովուրդը, շինել է նոցա համար Հայ եկեղեցի։ Եկեղեցիներ ի հարկէ շատ կան գիւղերում և շատ էլ կառուցուում են այս և այն բարերարների ձեռքով, բայց եթէ մենք շեշտում ենք Գլդանի Հայ եկեղեցին, դա ունի իւր յատուկ պատճառը. դա թէպէտ և մի շատ